



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 151

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 63-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՍԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա ներկայացված դիմումը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի 2-րդ մաս) ամրագրված կարգավորումները, դրանք վերլուծելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության համատեքստում, հարց է բարձրացրել այն մասին, որ. «(...) Գործնականում ծագում է խնդիր, երբ դատարանը մեկնաբանում է ժամը, ոչ թե աստղաբաշխական կամ աշխատանքային ժամ իմաստով, այլ՝ դատական աշխատանքային ժամ իմաստով: (...)» և խնդրել է տալ խորհրդատվական պարզաբանում «նիստերի դահլիճից հեռացնել» դատական սանկցիայի կիրառման համար նախատեսված ժամանակի (ժամի) հաշվարկման կարգի վերաբերյալ:

2. Գատական սանկցիաները, լինելով իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն միջոցներ, նպատակ են հետապնդում նիստերի դահլիճում պահպանել դատական նիստի կարգը՝ կանխելով դատավարական օրենքի պահանջներին հակասող այնպիսի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը, որը ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտահայտվում է դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելով կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելով կամ ոչ պատշաճ

կատարելով, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելով, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելով կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելով:

Վերոնշյալ կարգավորումը բխում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածից, որի համաձայն՝ «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: (...)»:

Ազատ գործելու սուբյեկտիվ իրավունքն իրավագործ անձին պատկանող վարքագծի չափն է՝ ուղղված նրա շահերի բավարարմանը, որը կրում է դիսպոզիտիվ բնույթ: Այդ դիսպոզիտիվությունը, սակայն, բացարձակ չէ և կաշկանդված է այլոց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և օրենքների պահպանության սահմաններով: Մասնավորապես, ազատության սահմանները բնորոշող սահմանադրաիրավական սուբյեկտիվ իրավունքին թղթակցում է անձի պարտականությունը դրսևորել իրավաչափ վարքագիծ, պահպանել էթիկայի կանոնները, լինել բարեխիղճ, քանզի սահմանադրի կողմից վերապահված՝ ազատ գործելու հնարավորությունը կարող է օգտագործվել անբարեխիղճորեն և չարաշահվել՝ իրավունքների իրացման դիսպոզիտիվության շրջանակներից դուրս գալու ու էթիկայի կանոնները շրջանցելու հետևանքով:

3. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:»:

Եվրոպական կոնվենցիայի՝ «Իրավունքի չարաշահման արգելքը» վերտառությամբ 17-րդ հոդվածում ամրագրված է. «Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ «Իրավունքի չարաշահման արգելքն» ամրագրող վերոնշյալ հոդվածի նպատակն է կանխել Կոնվենցիայում ամրագրված սկզբունքների օգտագործումը սեփական շահից ելնելով՝ միտված Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խաթարմանը (տե՛ս *mutatis mutandis* W.P. and Others v. Poland գործով 2004 թվականի սեպտեմբերի 2-ի որոշումը, գանգատ թիվ 42264/98, 2-րդ կետ, J. Glimmerveen and J. Hagenbeek v. the

Netherlands գործով 1979 թվականի հոկտեմբերի 11-ի որոշումը, գանգատներ թիվ 8348/78 և 8406/78): Ընդ որում, «Իրավունքի չարաշահման արգելքն» ամրագրող Եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածի բովանդակությունը համանման կերպով սահմանված է նաև 1948 թվականի դեկտեմբերի 10-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 30-րդ հոդվածում, 1966 թվականի դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 5-րդ հոդվածի 1-ին մասում և այլ միջազգային իրավական փաստաթղթերում, որոնք նույնպես երաշխավորում են անձի՝ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը փաստում է, որ հայցվող իրավական պաշտպանության արդյունավետությունը չի կարող պայմանավորվել իրավունքի սուբյեկտին օրենսդրի կողմից վերապահված իրավունքների անբարեխիղճ օգտագործման, դրանց չարաշահման, նպատակային նշանակությանն անհամապատասխան գործադրման, վարույթի բնականոն ընթացքի կազմալուծման, փակուղային իրավիճակների հանգեցման և վարույթի արհեստական գերբեռնվածության ստեղծման նպատակներով: Հակառակ պարագայում, արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու երաշխավորված իրավունքը ենթակա է լինում սահմանափակման, քանի որ իրավական պաշտպանություն հայցող անձն իր դրսևորած վարքագծով խաթարում է ակնկալվող պաշտպանության իրականացման ձևը:

Մասնավորապես, իրավունքի սուբյեկտի կողմից դրսևորվող ոչ իրավաչափ վարքագիծը ենթակա է լինում կանխման դատական սանկցիաների միջոցով, որոնք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ կիրառվում են դատավարության պատշաճ և կանոնակարգված ընթացքն ապահովելու նպատակով: Այլ կերպ, դատական սանկցիաների կիրառումը դատավորի կողմից իր իշխանության կենսագործման միջոցով համապատասխան քայլերի ձեռնարկումն է արդարադատության պատշաճ իրականացման խոչընդոտների վերացումը երաշխավորելու համար (տե՛ս *mutatis mutandis* Ravensborg v. Sweden գործով 1994 թվականի մարտի 23-ի վճռի 34-րդ կետը):

Դատական նիստի կարգի խախտմամբ պայմանավորված դատական սանկցիաների կիրառման մասին իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ նշելով, որ. «(...) [դատական սանկցիաներ] դատարանը կիրառում է միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով: Սակայն դատական նիստի սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում՝ այդ կարգի խախտման փաստով պայմանավորված, (...) [դատական սանկցիաներ] դատարանը կիրառում է իր նախաձեռնությամբ՝ ելնելով դատական նիստի կարգի խախտման հետ կապված

հանգամանքների իր հայեցողական գնահատականներից: (...)» (տե՛ս 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ ՄԴՈ-1191 որոշման 6-րդ կետը):

4. Քրեադատավարական հարթությունում իրավաչափ վարքագծի դրսևորմամբ իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացումը կարող է ապահովված լինել, երբ իրավունքի սուբյեկտը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների հստակ և միակերպ կատարմամբ (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ-ի մարտի 17-ի՝ ՄԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ կետը): Այդ պահանջները միտված են բարեխիղճ և իրավաչափ վարքագծի վրա հիմնված քրեադատավարական իրավահարաբերությունների ձևավորմանը, որի պայմաններում կարող են երաշխավորված լինել քրեադատավարական էթիկայի կանոնները: Քրեադատավարական էթիկայի և ոչ իրավաչափ վարքագծի արգելքի հարաբերակցության համատեքստում իրավունքի սուբյեկտից պահանջվում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որի պարագայում բացառվում է իրավունքն իր սոցիալական-նպատակային նշանակությանը և էթիկայի կանոններին անհամապատասխան գործադրելու, այն անբարեխիղճ իրացնելու, պարտականություններն անբարեխիղճ կատարելու վտանգը, որը վնաս է հասցնում այլ անձանց իրավունքներին կամ արդարադատության շահին: Այսինքն, քրեադատավարական հարթությունում իրավունքի սուբյեկտի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանող նորմերի պաշտպանության օբյեկտն են հանդիսանում այլ անձանց իրավունքները և արդարադատության շահը:

Այլ անձանց իրավունքների պաշտպանության հիմքում ընկած է «*Qui jure suo utitur nemini facit injuriam*» կանոնը, որը նշանակում է՝ իրավունքի իրացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքը:

Արդարադատության շահն ընդհանրական առումով դիտարկվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման տիրույթում, որոնց միջև եղած անխզելի կապն օրենսդրին պարտավորեցնում է սահմանել քրեական գործերի քննության այնպիսի կարգ և դրա ապահովմանն ուղղված այնպիսի իրավաբանական պատասխանատվության միջոցներ, որ այդ շահերից յուրաքանչյուրի պաշտպանությունն ուղիղ համեմատական լինի այդպիսի կարգի սահմանմամբ հետապնդվող նպատակին:

5. Ամբաստանյալի կողմից դատական նիստերի դահլիճում ոչ իրավաչափ վարքագծի դրսևորմամբ արտահայտված քրեական վարույթի բնականոն ընթացքի խաթարումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի համաձայն կարող է կանխվել իրավաբանական պատասխանատվության միջոցների, այն է՝ օրենսդրի կողմից սահմանված դատական սանկցիաների (նախազգուշացում, տուգանք, դատական նիստերի դահլիճից հեռացում) համարժեք կիրառմամբ, որի պայմաններում կարող են նաև երաշխավորված լինել այլոց իրավունքների, ինչպես նաև հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

Մինչև 2011 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-42-Ն օրենքի ընդունումը ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերությունում ամրագրված էր. «(...) ամբաստանյալը նիստերի դահլիճից հեռացվում է մինչև 10 օր ժամկետով»:

Վերոշարադրյալ կարգավորումը 2011 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-42-Ն օրենքի ընդունմամբ վերանայվեց: Մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչվեց և նույն հոդվածի 2-րդ մասում նախատեսվեց հետևյալը. «Դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչև դատաքննության ավարտը:

Նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ: Հայցվորի նկատմամբ նիստերի դահլիճից հեռացում կիրառվելու դեպքում նիստը հետաձգվում է սանկցիայի կիրառման ժամկետով:

Դատավարությանը մասնակցող՝ նիստերի դահլիճից հեռացված անձի փաստաբանի կամ այլ ներկայացուցչի հիմնավորված միջնորդությամբ դատարանն իրավունք ունի մինչև սանկցիայի կիրառման ժամկետի լրանալը վերականգնելու հեռացված անձի մասնակցությունը դատական նիստին»:

Վերոշարադրյալ փոփոխությունների և լրացումների հիմքում դրվեցին ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ ՍԳ-Ռ-851 որոշմամբ արտահայտված՝ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի կանոնակարգումներն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու վերաբերյալ իրավական դիրքորոշումը, ինչպես նաև Հայաստանում դատավարությունների դիտարկում ծրագրի (2008 թվականի ապրիլից 2009 թվականի հունիս) արդյունքում ԵԱՀԿ/ԺՄԻԳ վերջնական գեկույցում նշված առաջարկությունն առ այն, որ դատական նիստերի դահլիճից ժամանակավոր հեռացումը պետք է սահմանափակվի շատ կարճ ժամկետներով՝ ապահովելով այդ որոշման կանոնավոր պարբերականությամբ վերանայումը:

6. Թիվ ՀՕ-42-Ն օրենքով ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասում կատարված փոփոխությունների և լրացումների վերլուծության հիման վրա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ 2011 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-42-Ն օրենքով փոփոխված և լրացված ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածով (այսուհետ նաև՝ ՀՀ գործող դատական օրենսգրքի 63-րդ հոդված) «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառումը կաշկանդված է հետևյալ ժամանակային

սահմանափակումներից որևէ մեկով՝ ա) մինչև 36 ժամ, բ) դատաքննության որոշակի ժամկետ, գ) դատաքննության ամբողջ ժամկետ:

Ընդ որում, հիշյալ ժամանակային սահմանափակումների կիրառման հնարավորությունն օրենսդիրը տարբերակել է ըստ քրեական դատավարությանը մասնակցող և չմասնակցող, սակայն դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց շրջանակի: Այսպես, դատավարությանը մասնակցող անձանց կողմից քրեական վարույթի ընթացքում հետապնդվող մասնավոր շահերի պաշտպանության, արդար դատաքննության իրավունքով նախատեսված երաշխիքների արդյունավետ կենսագործման անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրն ամրագրել է, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց (բացառությամբ՝ փաստաբանի և դատախազի, ինչպես նաև այդ պահին ցուցմունք տվող վկայի) նկատմամբ «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով: Մինչդեռ, քրեական դատավարությանը չմասնակցող, սակայն դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց դեպքում օրենսդիրը քննարկվող դատական սանկցիայի գործողության ժամկետը սահմանափակել է դատաքննության որոշակի ժամկետով կամ դրա ամբողջ ժամանակահատվածով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը փաստում է, որ գործող ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածում կատարված փոփոխությունները և լրացումները նպատակ են հետապնդել նվազեցնել քրեական դատավարությանը մասնակցող անձի՝ ամբաստանյալի նկատմամբ կիրառվող «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության առավելագույն ժամկետը: Ընդ որում, եթե մինչ 2011 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-42-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածը «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության ժամկետը հաշվարկում էր՝ որպես չափման միավոր հիմք ընդունելով օրվա կտրվածքը, ապա հիշյալ օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների պայմաններում հիմք է ընդունվում հաշվարկի հետևյալ միավորները՝

ա) ժամային (քրեական դատավարությանը մասնակցող անձանց համար),

բ) դատաքննության ժամկետային (քրեական դատավարությանը չմասնակցող անձանց համար):

7. Նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների և կիրառման ենթակա չափման միավորների առկայության պայմաններում ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության ընթացքը հաշվարկելիս պետք է ելնել այդ սանկցիայի կիրառմամբ հետապնդվող նպատակից, այն է՝ դատական քննության ընթացքում դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելուն, դրանք չարաշահելուն կամ այլ կերպ դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտելուն իրավաբանական

պատասխանատվության միջոցով հակազդելը, որի արդյունքում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորող քրեական դատավարությանը մասնակցող անձը ժամանակավորապես զրկվում է դատական նիստերի դահլիճում ընթացող դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից: Հետևաբար, «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառմամբ հետապնդվող նպատակից բխում է, որ այդ սանկցիայի գործողության հետևանքները տարածվում են նիստերի դահլիճում ընթացող դատական քննության նկատմամբ և կաշկանդված են այդ քննության սահմաններով:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի վերոշարադրյալ մոտեցումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ եթե իր իրավունքներից անբարեխղճորեն օգտվող, դրանք չարաշահող կամ այլ կերպ գործի դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտող քրեական դատավարությանը մասնակցող անձի՝ դատական նիստին անմիջականորեն մասնակցելու իրավունքի սահմանափակման ժամկետը հաշվարկվի աստղաբաշխական (կամ աշխատանքային) ժամով, այսինքն՝ տարածվի նաև դատական նիստի ժամկետի սահմաններից դուրս գտնվող ժամանակահատվածի վրա, որի ընթացքում դատական նիստ տեղի չի ունենում, ապա «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառմամբ հետապնդվող նպատակը չի կենսագործվի: Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:»:

Մեջբերված կանոնում պարունակվող «ut res magis valeat quam pereat» (օրենքը պետք է մեկնաբանվի առանց դրա իմաստի արժեզրկման) իրավամեկնաբանման հնարքին համապատասխան մեկնաբանելով քննարկվող նորմը՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասում վկայակոչված՝ ժամով հաշվարկվող միավորը քրեադատավարական իրավահարաբերություններում չի կարող մեկնաբանվել որպես աստղաբաշխական (կամ աշխատանքային) ժամ, քանի որ դա չի բխում օրենքի (ՀՀ դատական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի) պահանջներից, ավելին՝ հանգեցնում է քննարկվող դատական սանկցիայի իմաստազրկման:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ իր իրավունքներից անբարեխղճորեն օգտվող, դրանք չարաշահող կամ այլ կերպ գործի դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտող քրեական դատավարությանը մասնակցող անձ հանդիսացող ամբաստանյալի՝ դատական նիստին անմիջականորեն մասնակցելու իրավունքի սահմանափակման առավելագույն 36 ժամն աստղաբաշխական (կամ աշխատանքային) ժամով հաշվարկելը խնդրահարույց, իսկ առանձին դեպքերում նաև անհնար է դարձնում ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում ամրագրված պահանջի, այն է՝ դատարանի կողմից կայացվող որոշմամբ պաշտպանի պարտադիր մասնակցության ապահովումը: Ընդ որում, անգամ եթե հնարավոր լինի 36 աստղաբաշխական (կամ աշխատանքային) ժամվա ընթացքում ապահովել պաշտպանի մասնակցությունը և նրան ներգրավել քրեական գործով դատական քննությանը, ապա անհնար կլինի նիստերի դահլիճից հեռացված ամբաստանյալի բացակայությամբ շարունակել գործի հետագա քննությունը, քանի որ անհրաժեշտություն կառաջանա պաշտպանին ժամանակ տրամադրել գործի նյութերին ծանոթանալու համար: Ավելին, «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության ընթացքն աստղաբաշխական (կամ աշխատանքային) ժամով հաշվարկելու դեպքում ամբաստանյալի բացակայությամբ գործի քննությունը շարունակելու՝ օրենքով նախատեսված կառուցակարգն, ըստ էության, կհմաստագրվի՝ հաշվի առնելով նաև դատարանների աշխատանքային ծանրաբեռնվածությունից բխող դատական նիստերի միջև ժամանակային խզումների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված կարգավորմանն այն մասին, որ՝ «(...) Հայցվորի նկատմամբ նիստերի դահլիճից հեռացում կիրառվելու դեպքում նիստը հետաձգվում է սանկցիայի կիրառման ժամկետով», ապա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը փաստում է, որ քաղաքացիադատավարական հարթությունում հայցվորին նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում օրենսդիրը նախատեսել է հատուկ կանոն («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մաս): Մասնավորապես, վերջինիս նախատեսումը պայմանավորված է քաղաքացիական և քաղաքացիադատավարական իրավահարաբերությունների կարգավորման հիմքում ընկած սկզբունքների առանձնահատկություններով («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մաս), այն է՝ հաշվի առնելով կարգավորման առարկան (համապատասխանաբար՝ մասնավոր իրավահարաբերություններ և մասնավոր վեճի լուծում), կարգավորման հիմնական մեթոդը (դիսպոզիտիվությունը), քաղաքացիական գործերով ապացուցման բեռի բաշխման կանոնները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդված): Նշված առանձնահատկություններով պայմանավորված՝ հայցվորը, որպես դատական պաշտպանության իրավունքն իրացնող, քաղաքացիական վարույթի նախաձեռնող, դրա շարժը կանխորոշող սուբյեկտ, առանցքային դեր ունի դատական վարույթի շրջանակներում, հետևաբար, նրա հարկադիր բացակայությամբ դատական նիստը շարունակելը չի կարող բխել նշված իրավահարաբերությունների էությունից:

8. Հիմք ընդունելով սույն որոշման 1-7-րդ կետերում շարադրված վերլուծությունը և արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառմամբ հետապնդվող նպատակը,

քրեադատավարական իրավահարաբերություններում դրա կիրառման կառուցակարգի առանձնահատկությունները՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը պարզաբանում է, որ «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության ընթացքի հաշվարկման ժամային չափման միավորի դեպքում գործի դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտող քրեական դատավարությանը մասնակցող անձի՝ դատական նիստին անմիջականորեն մասնակցելու իրավունքի սահմանափակման ժամկետը պետք է հաշվարկվի «դատական աշխատանքային ժամով», այսինքն՝ սահմանափակված լինի միայն դատական նիստի ժամանակահատվածով: «Նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության ընթացքի հաշվարկման ժամային չափման միավորի դեպքում գործի դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտող քրեական դատավարությանը մասնակցող անձի՝ դատական նիստին անմիջականորեն մասնակցելու իրավունքի սահմանափակման ժամկետը չի կարող հաշվարկվել աստղաբաշխական (կամ աշխատանքային) ժամով և չի կարող տարածվել դատական նիստի ժամկետի սահմաններից դուրս գտնվող ժամանակահատվածի վրա, որի ընթացքում դատական նիստ տեղի չի ունենում (օրինակ՝ դատական նիստի ընդմիջման, խորհրդակցական սենյակում գտնվելու ժամանակահատվածը): Այլ կերպ՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության մինչև 36-ժամյա ընթացքը ենթակա է հաշվարկման դատաքննության ժամանակահատվածի այն նույն սահմաններում, որում ներառված են նաև քրեական դատավարությանը չմասնակցող, սակայն դատական նիստերի դահլիճում գտնվող անձանց նկատմամբ կիրառվող «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի գործողության որոշակի ժամկետը կամ ամբողջ ժամանակահատվածը:

Միևնույն ժամանակ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1975 թվականի մայիսի 21-ի «Սեղադրյալի բացակայությամբ քրեական վարույթի ընթացքը կանոնակարգող չափանիշների մասին» թիվ 75 (11) բանաձևի համաձայն՝ մեղադրյալի բացակայությամբ (in absentia) քրեական վարույթը պետք է ընթանա բացառիկ դեպքերում: Ուստի, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն ընդգծում է, որ նշված սանկցիան կիրառվում է այն դեպքերում, երբ անհնար է դատարանի գործունեության բնականոն ընթացքն ապահովել առանց ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու:

Վերոգրյալի հետ մեկտեղ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը շեշտում է, որ «նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիա կիրառելիս անհրաժեշտ է երաշխավորել արարքի ծանրության և կիրառված սանկցիայի համաչափության սկզբունքը՝ ձեռնպահ մնալով այդ սանկցիայի գործողության չարդարացված երկար ժամկետներ սահմանելուց, ամբաստանյալի պաշտպանության իրավունքը (այդ պահանջի վերաբերյալ տե՛ս Տիգրան Առաքելյանի և այլոց գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի

8-ի թիվ ԵԿԴ/0225/01/11 որոշումը), ինչպես նաև համապատասխան միջնորդության դեպքում՝ սանկցիայի վերանայման հնարավորությունը:

Հետևաբար, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը

Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է

ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի 2-րդ մաս) սահմանված «նիստերի դահլիճից հեռացնել» դատական սանկցիայի կիրառման համար նախատեսված ժամանակը (ժամը) սահմանափակված է դատական նիստի ժամանակահատվածով («դատական աշխատանքային ժամ»):

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահի
պաշտոնակատար**

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. օգոստոսի 14
ք. Երևան